

## Կարգ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՍՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ՎԱՐՄԱՆ ԵՎ ՓԱԿՄԱՆ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և նոր բացվող բանկերի կողմից կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Հայաստանի Հանրապետության դրամով կուտակային հաշիվների բացման, վարման և փակման կանոնները:

1.2 Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սույն կարգի 1.1 կետով նախատեսված կուտակային հաշիվները բացվում, վարվում և փակվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանոնադրությանը, սույն կարգին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3 Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Կենտրոնական բանկ – Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Բանկային գործառնությունների բաժին – Կենտրոնական բանկի գործառնական վարչության բանկային գործառնությունների բաժին

Նախաձեռնող անձինք – Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու նպատակով կուտակային հաշիվ բացող անձինք:

Դիմող բանկ - կանոնադրական հիմնադրամը համալրելու նպատակով կենտրոնական բանկում կուտակային հաշիվ բացող բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը

Կուտակման հաշիվ - կանոնադրական հիմնադրամը համալրելու նպատակով կենտրոնական բանկում բացված հաշիվ:

### 2.1 Կուտակման հաշիվների բացումը

2.1.1 Հայաստանի Հանրապետության տարածքում նոր գրանցվող բանկերի կանոնադրական հիմնադրամի համալրման հաշիվները բացվում են նախաձեռնող անձանց կողմից կենտրոնական բանկի նախագահին հասցեագրված նամակի հիման վրա՝ կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական համաձայնությունը ստանալուց հետո:

2.1.2 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կանոնադրական հիմնադրամի ավելացման նպատակով կանոնադրական հիմնադրամի համալրման հաշիվները բացվում են դիմող բանկի կողմից կենտրոնական բանկի նախագահին հասցեագրված նամակի և կանոնակարգ 1-ով պահանջվող կանոնադրական հիմնադրամի համալրմանն առնչվող փաստաթղթերի հիման վրա:

2.1.3 Կանոնադրական հիմնադրամի համալրման հաշիվներ բացող անձանց կողմից ըստ սույն կարգի 2.1.1 և 2.1.2 կետերի ներկայացված նամակները ներկայացվում են ստորագրման կենտրոնական բանկի նախագահին կամ նրա տեղակալին, առանձին դեպքերում նաև կենտրոնական բանկի նախագահի կողմից լիազորված կենտրոնական բանկի այլ պաշտոնատար անձին:

2.1.4 Կենտրոնական բանկի նախագահի համաձայնությունը ստանալուց հետո, «Կուտակային հաշիվ բացելու մասին» նամակի և լիցենզավորման բաժնի միջգրասենյակային հուշագրի հիման վրա, բանկային գործառնությունների բաժինը նույն բանկային օրվա ընթացքում բացում է կուտակային հաշիվը՝ միաժամանակ հաճախորդներին տրամադրելով դրամային հաշիվների համարները:

2.1.5 Կուտակման հաշվի միջոցները սառեցվում են և չեն կարող օգտագործվել, տիրապետվել և տնօրինվել մինչև բանկի կանոնադրության գրանցումը կամ մերժումը:

## **2.2 Կուտակային հաշիվների վարումը և փակումը**

2.2.1 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կանոնադրական հիմնադրամի ավելացման նպատակով բացված կուտակային հաշիվների մնացորդների դիմաց՝ սկսած հաշվի բացման օրվանից մինչև բանկի կանոնադրությունը գրանցելու կամ մերժելու մասին կենտրոնական բանկի նախագահի հրամանի ուժի մեջ մտնելու օրը կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր օր հաշվեգրվում են տոկոսներ:

2.2.2 Հայաստանի Հանրապետության տարածքում նոր գրանցվող բանկերի կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բացված կուտակային հաշիվների մնացորդների դիմաց կենտրոնական բանկի կողմից տոկոսներ չեն հաշվեգրվում:

2.2.3 Հայաստանի Հանրապետության դրամով բացված կուտակային հաշվի մնացորդի դիմաց կենտրոնական բանկի կողմից վճարվող տոկոսների տարեկան դրույքը սահմանվում է յուրաքանչյուր տարի, կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա՝ հիմք ընդունելով տարին 365 օր: Կենտրոնական բանկի «Գործառնական օր» համակարգում գործառնական վարչության պատասխանատու աշխատակիցը կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա մուտքագրում է տոկոսադրույքի փոփոխությունը հաշվետու տարվա առաջին աշխատանքային օրը:

2.2.6 Գիմող բանկի կանոնադրությունը գրանցելու կամ մերժելու մասին կենտրոնական բանկի նախագահի հրամանի հիման վրա, նույն օրվա ընթացքում, լիցենզավորման բաժինը բանկային գործառնությունների բաժնին միջգրասենյակային հուշագիր է ուղարկում տվյալ բանկի կուտակային հաշիվը փակելու և հաշվի մնացորդը տվյալ բանկի թղթակցային հաշվին փոխանցելու վերաբերյալ:

2.2.7 Նոր բացվող բանկի կանոնադրությունը գրանցելու կամ մերժելու մասին կենտրոնական բանկի նախագահի հրամանի հիման վրա, նույն օրվա ընթացքում, լիցենզավորման բաժինը բանկային գործառնությունների բաժնին միջգրասենյակային հուշագիր է ուղարկում տվյալ բանկի կուտակային հաշիվը փակելու և հաշվի մնացորդը տվյալ բանկի թղթակցային հաշվին կամ նախաձեռնող անձանց կողմից ներկայացված այլ հաշվեհամարին փոխանցելու վերաբերյալ:

2.2.8 Գիմող բանկերի կողմից կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով կենտրոնական բանկում բացված Հայաստանի Հանրապետության դրամով կուտակային հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրված տոկոսները մուտքագրվում են կենտրոնական բանկում բանկի թղթակցային հաշվին՝ բանկի կանոնադրությունը գրանցելու կամ մերժելու մասին կենտրոնական բանկի նախագահի հրամանի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

2.2.10 Կենտրոնական բանկի պատասխանատու ստորաբաժանումները պարտավոր են պահպանել կուտակային հաշվով կատարվող գործառնությունների, հաշվում միջոցների շարժի, մնացորդի և բանկային գաղտնիք կազմող այլ տեղեկությունների լիակատար գաղտնիությունը: Նշված տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.2.11 Կուտակման հաշիվների քաղվածքները հաճախորդներին են տրվում/ուղարկվում բանկային գործառնությունների բաժնի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.2.12 Բանկային գործառնությունների բաժինը յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կենտրոնական բանկում վարվող կուտակային հաշիվների քաղվածքները տրամադրում է հաճախորդ բանկերին:

2.2.13 Տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կուտակային հաշվի մնացորդի անհամապատասխանության դեպքում, հաճախորդ բանկը այդ մասին հայտնում է կենտրոնական բանկի բանկային գործառնությունների բաժին, որը 3 բանկային օրվա ընթացքում բացահայտում է անհամապատասխանության պատճառը և հայտնում այդ մասին հաճախորդ բանկին:

10 օրվա ընթացքում հաճախորդ բանկի կողմից կուտակային հաշվի մնացորդի վերաբերյալ առարկություններ չստանալու դեպքում տվյալները համարվում են ճիշտ: